«ՀԱՆՐԱՔՎԵԻ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-539-31.03.2020-ՊԻ-011/) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

«Հանրաքվեի մասին» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծով (այսուհետ՝ նախագիծ) առաջարկվում է «Հանրաքվեի մասին» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ օրենք) 6-րդ հոդվածը 2-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 3-րդ և 4-րդ մասերով.

*«3. Այն դեպքերում, երբ **ռազմական կամ արտակարգ դրությունը հայտարարվել է սույն օրենքով նախատեսված հանրաքվեն նշանակվելուց հետո**, ապա մինչև ռազմական կամ արտակարգ դրություն հայտարարելն սկսված **հարցը հանրաքվեի դնելու հետ կապված բոլոր գործողություններն ու ժամկետները կասեցվում են օրենքի ուժով**: Ռազմական կամ արտակարգ դրություն հայտարարելուց հետո 12 ժամվա ընթացքում Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հանդես է գալիս հանրաքվեն կասեցնելու մասին հայտարարությամբ:*

*4. **Հանրաքվեն վերսկսվում է ռազմական կամ արտակարգ դրության ավարտից հետո** սույն օրենսգրքով սահմանված կարգով»:*

Նախագծի 2-րդ հոդվածով առաջարկվում է օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

*«5. Սույն օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ **արտակարգ կամ ռազմական դրության պայմանով կասեցված հանրաքվեն անցկացվում է ռազմական կամ արտակարգ դրության ավարտից ոչ շուտ, քան 50 և ոչ ուշ, քան 65 օր հետո**: Ռազմական կամ արտակարգ դրության ավարտից հետո՝ եռօրյա ժամկետում, Հանրապետության նախագահն ընդունում է հրամանագիր, որով նշանակվում է կասեցված հանրաքվեի գործընթացը մեկնարկելու օրը և քվեարկության օրը, որը պետք է լինի կիրակի:*

Վերսկսված հանրաքվեի գործընթացը մեկնարկելու օրվա և քվեարկության օրվա միջև ժամանակահատվածը չի կարող պակաս լինել ռազմական կամ արտակարգ դրության պայմանով կասեցված հանրաքվեի կասեցման օրվանից մինչև քվեարկության օրն ընկած ժամանակահատվածից:

Սույն օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ ռազմական կամ արտակարգ դրության պատճառով կասեցված հանրաքվեի վերսկսման դեպքում մինչև կասեցման պահը կատարված գործողությունների ընթացքը շարունակվում է կասեցված հանրաքվեի գործընթացը մեկնարկելու օրվանից:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովն իրավասու է պատճառաբանված որոշմամբ փոփոխելու առանձին գործողությունների կատարման ժամկետների հաշվարկը՝ պայմանավորված վերսկսված հանրաքվեի պատշաճ կազմակերպման անհրաժեշտությամբ և սահմանելու վերսկսված հանրաքվեի գործընթացի նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների նոր ժամանակացույց»:

Նախագծի 3-րդ հոդվածով առաջարկվում է օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 1.1-ին կետով.

«1.1. Սույն օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ ռազմական կամ արտակարգ դրության պատճառով կասեցված հանրաքվեի դեպքում քարոզչության ֆինանսավորման հիմնադրամում մուտքերը սառեցվում են մինչև հանրաքվեի վերսկսումը: Հանրաքվեի վերսկսումից հետո քարոզչության կողմերը կարող են օգտագործել իրենց հիմնադրամներում մնացած միջոցները:

Սույն օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ ռազմական կամ արտակարգ դրության պատճառով կասեցված հանրաքվեի «ԱՅՈ» կամ «ՈՉ» քարոզչության հիմնադրամների հաշվին կատարված մուծումների ընդհանուր գումարը չպետք է գերազանցի նվազագույն աշխատավարձի 150 000-ապատիկը:

Ռազմական կամ արտակարգ դրության պատճառով կասեցված հանրաքվեի հիմնադրամների հաշվին կուսակցությունների, հասարակական կազմակերպությունների կամ կուսակցությունների դաշինքների մուծումների չափը քարոզչության հիմնադրամ յուրաքանչյուրի համար չի կարող գերազանցել նվազագույն աշխատավարձի 40 000-ապատիկը»:

Նախագծի 4-րդ հոդվածի համաձայն՝

«1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների 2020 թվականի ապրիլի 5-ին նշանակված հանրաքվեի գործընթացը վերսկսվում է սույն օրենքով սահմանված կարգով:

Նախագծին կից ներկայացված հիմնավորման համաձայն՝ «Հանրաքվեի մասին» սահմանադրական օրենքը ռազմական կամ արտակարգ դրության

պատճառով հանրաքվեի չեղարկման խնդրին անդրադառնում է երկու դրույթներում՝ 6-րդ հոդվածում և 12-րդ հոդվածի 5-րդ մասում: Օրենքը, սակայն, չի կարգավորում նշանակված, բայց ռազմական կամ արտակարգ դրության պատճառով չանցկացված հանրաքվեն ռազմական կամ արտակարգ դրության վերացումից հետո անցկացնելու ընթացակարգը, ուստի նախագծով առաջարկվում է սահմանել այդ ընթացակարգը»:

Վերոգրյալից պարզ է դառնում, որ նախագծի նպատակն է սահմանել նշանակված, սակայն ռազմական կամ արտակարգ դրության պատճառով չանցկացված հանրաքվեն ռազմական կամ արտակարգ դրության վերացումից հետո անցկացնելու ընթացակարգը:

Այս առումով հարկ ենք համարում անդրադառնալ հետևյալ իրավական կարգավորումներին:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ:*

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 206-րդ հոդվածի համաձայն՝

«Քաղաքացիական նախաձեռնության կարգով ներկայացված օրենքի նախագծի վերաբերյալ Սահմանադրական դատարանի կողմից՝ Սահմանադրությանը համապատասխանության մասին որոշումն ընդունվելուց, ինչպես նաև ***Ազգային ժողովի կողմից հանրաքվե անցկացնելու մասին որոշումն ընդունվելուց հետո՝ եռօրյա ժամկետում, Հանրապետության նախագահը նշանակում է հանրաքվե: Հանրաքվեն անցկացվում է հանրաքվե նշանակվելուց ոչ շուտ, քան հիսուն, և ոչ ուշ, քան վաթսունհինգ օր հետո»:***

«Հանրաքվեի մասին» սահմանադրական օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝

«1. ***Հանրաքվե չի կարող անցկացվել ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ՝*** *անկախ ռազմական կամ արտակարգ դրությունն ընդգրկող տարածքի չափից: Հանրաքվե չի կարող անցկացվել նաև Ազգային ժողովի ընտրությունների օրը:*

2. ***Այն դեպքում, երբ ռազմական կամ արտակարգ դրությունը հայտարարվել է սույն օրենքով նախատեսված հանրաքվեի գործընթացն սկսելուց հետո, սակայն մինչև Հանրապետության նախագահի կողմից հանրաքվե նշանակելը,*** *ապա* ***մինչև ռազմական կամ արտակարգ դրություն հայտարարելն սկսված հարցը հանրաքվեի դնելու հետ կապված բոլոր գործողություններն ու ժամկետները կասեցվում են և վերսկսվում ռազմական կամ արտակարգ դրության ավարտից հետո:»:***

«Հանրաքվեի մասին» սահմանադրական օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

«Սահմանադրության 206-րդ հոդվածի համաձայն՝ ***հանրաքվեն անցկացվում է հանրաքվե նշանակելուց ոչ շուտ, քան 50, և ոչ ուշ, քան 65 օր հետո»:***

«Հանրաքվեի մասին» սահմանադրական օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասում սահմանված գործող իրավակարգավորման համաձայն՝

*«**Նշանակված, սակայն** ռազմական կամ արտակարգ դրության պատճառով **չանցկացված** հանրաքվեն անցկացվում է ռազմական կամ արտակարգ դրության ավարտից ոչ շուտ, քան 50, և ոչ ուշ, քան 65 օր հետո: Հանրապետության նախագահը հանրաքվեն նշանակում է ռազմական կամ արտակարգ դրության ավարտից հետո՝ եռօրյա ժամկետում»:*

Վերոգրյալ իրավակարգավորումների համակարգային վերլուծությունից պարզ է դառնում, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 206-րդ հոդվածով հստակ սահմանված է հանրաքվե անցկացնելու ժամանակահատվածը, այն է՝ ***հանրաքվեն անցկացվում է նշանակման օրվանից ոչ շուտ, քան հիսուն, և ոչ ուշ, քան վաթսունհինգ օր հետո:*** Ինչ վերաբերում է ռազմական կամ արտակարգ դրություն հայտարարելու հանգամանքով պայմանավորված հանրաքվե անցկացնելու վերաբերյալ կարգավորումներին, ապա հարկ է նշել, որ ***օրենսդիրը նախատեսել է հանրաքվեի գործընթացի վերաբերյալ երկու տարբերվող մեխանիզմներ՝*** կախված նրանից, թե ռազմական կամ արտակարգ դրություն հայտարարելու դրությամբ ունենք նշանակված, սակայն չանցկացված հանրաքվե, թե ռազմական կամ արտակարգ դրությունը հայտարարվել է հանրաքվեի գործընթացն սկսելուց հետո՝ մինչև Հանրապետության նախագահի կողմից հանրաքվե նշանակելը:

Մասնավորապես՝ առաջին դեպքում օրենսդիրը նախատեսել է միայն ***հանրաքվեի անցկացում ռազմական կամ արտակարգ դրության ավարտից ոչ շուտ, քան 50, և ոչ ուշ, քան 65 օր հետո,*** իսկ երկրորդ դեպքում՝ ***մինչև ռազմական կամ արտակարգ դրություն հայտարարելն սկսված հարցը հանրաքվեի դնելու հետ կապված բոլոր գործողությունների ու ժամկետների կասեցում և վերսկսում ռազմական կամ արտակարգ դրության ավարտից հետո:*** Այսինքն՝ օրենսդիրը մինչև ռազմական կամ արտակարգ դրություն հայտարարելն սկսված հարցը հանրաքվեի դնելու հետ կապված բոլոր գործողություններն ու ժամկետները կասեցնելու հնարավորությունն ամրագրել է միայն ***մինչև Հանրապետության նախագահի***

կողմից հանրաքվեն նշանակելը հայտարարված ռազմական կամ արտակարգ դրության դեպքում՝ ըստ էության չկարգավորելով ռազմական կամ արտակարգ դրություն հայտարարելով պայմանավորված ***նշանակված, սակայն չանցկացված հանրաքվեի դեպքում մինչև ռազմական կամ արտակարգ դրություն հայտարարելն սկսված հարցը հանրաքվեի դնելու հետ կապված բոլոր գործողություններն ու ժամկետների*** *ճակատագիրը:*

Շարադրվածի համատեքստում Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ նախատեսված կարգավորումների և դրանով հետապնդվող նպատակների միջև առկա է ողջամիտ հարաբերակցություն, այդուհանդերձ, նախագծային դրույթների կիրառման ընթացքում իրավական որոշակիության ապահովման, ընտրված մեխանիզմների արդյունավետության, ինչպես նաև նախագծով հետապնդվող իրավաչափ նպատակին հասնելու համար առաջարկում ենք նախագիծը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

« ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Ս Ա Հ Մ Ա Ն Ա Դ Ր Ա Կ Ա Ն Օ Ր Ե Ն Ք Ը

«ՀԱՆՐԱՔՎԵԻ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. *«Հանրաքվեի մասին» 2018 թվականի մարտի 23-ի ՀՕ-155-Ն սահմանադրական օրենքի (այսուհետ՝ օրենք) 12-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 5.1-ին մասով.*

«5.1. Սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքում հանրաքվեի կազմակերպման հետ կապված սույն օրենքի 4-րդ գլխի հիման վրա կայացված որոշումները շարունակում են գործել: Հանրաքվեի պատշաճ կազմակերպման նպատակով, անհրաժեշտության դեպքում, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից այդ որոշումները կարող են վերանայվել:

Հոդված 2. *Օրենքի 20-րդ հոդվածում՝*

1) 1-ին մասում «100 000-ապատրիկը» և «25 000-ապատրիկը» բառերից հետո լրացնել «, բացառությամբ սույն հոդվածի 1.1-ին մասով նախատեսված դեպքերի:» բառերով.

2) հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 1.1-ին մասով.

«1.1. Սույն օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքերում նշանակված հանրաքվեի պարագայում հիմնադրամի հաշվին կատարված մուծումների ընդհանուր գումարը չպետք է գերազանցի նվազագույն աշխատավարձի 150 000-ապատիկը, իսկ կուսակցությունների, հասարակական կազմակերպությունների կամ կուսակցությունների դաշինքների մուծումների չափը քարոզչության հիմնադրամ յուրաքանչյուրի համար չի կարող գերազանցել նվազագույն աշխատավարձի 40 000-ապատիկը։»։

Հոդված 3. *Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ*

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։

2. Սույն օրենքի դրույթները տարածվում են նաև մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը նշանակված հանրաքվեի նկատմամբ։»։